ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 01.04.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2022/85

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Հադրութ-1» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Հ. Օհանյանի (լիազորագիր՝ տրված 04.03.2022թ.)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 01.03.2022թ. թիվ 26/26-1/3513-2022 գրությամբ «Հադրութ-1» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 22.02.2022թ. թիվ ՍՄ//4327-2022 գրության հիման վրա 01.03.2022թ. թիվ 26/26-1/3513-2022 գրությամբ նախաձեռնել է «Հադրութ-1» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Հադրութ-1» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Հադրութ-1» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանի (այսուհետ՝ Բողոքներ քննող անձ) վարույթում է գտնվում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) գրավոր հիմքերի համաձայն, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից «Հադրութ-1» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու նպատակով նախաձեռնված թիվ՝ ՍՑ-ՆԳ-2022/85 ծածկագրով ընթացակարգը (այսուհետ՝ Ընթացակարգ):

Ընթացակարգը նախաձեռնվել է ՀՀ ֆինանսների նախարարության 01.03.2022թ թիվ 26/26-1/3513-2022 գրությամբ (այսուհետ՝ Գրություն), որով ՀՀ ֆինանսների նախարարությունը Բողոքներ քննող անձին է փոխանցել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 22.02.2022թ. թիվ ՍՄ//4327-2022 գրության պատճենը (այսուհետ՝ Գրավոր հիմքեր) և խնդրել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ընթացքը:

1. Գործի նախապատմությունը.

1.1. Ընկերությունը մասնակցել է Պատվիրատուի հայտարարած թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-ԵԽ-3» ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Աճուրդ) 1-ին և 2-րդ չափաբաժիններին: Սակայն, վրիպման հետևանքով 1-ին չափաբաժնի մասով Աճուրդին առաջարկել է իր կողմից նախատեսված գնից շուրջ երկու անգամ ավելի ցածր գին՝ նախատեսվածից 10 000 000 (տաս միլիոն) ՀՀ դրամ ցածր գին: Արդյունքում՝ այդ վրիպման պատճառով, պայմանագրի կատարման փուլում Ընկերությունը կրելու էր 10 000 000 ՀՀ դրամի չափով վնաս:

Աճուրդի 12.01.2022թ-ի թիվ 2 արձանագրությամբ Ընկերությունը 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված մասնակից: 23.01.2022թ.-ին Պատվիրատուն ծանուցել է Ընկերությանը՝ առաջարկելով կնքել Աճուրդի թիվ ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-ԵԽ-3 ծածկագրով պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) (Ընկերությունը Պայմանագիրը չի կնքել, քանի որ եթե կնքեր, ապա Պայմանագրի կատարման փուլում կրելու էր 10 000 000 ՀՀ դրամի վնաս): Սակայն, թաքցնելով պայմանագիրը կնքելու առաջարկը 23.01.2022թ.-ին ուղարկելու հանգամանքը՝

Պատվիրատուն այդ առաջարկը ուղարկելու օրվան հաջորդող 20-րդ աշխատանքային օրը՝ 22.02.2022թ.-ի թիվ ՍՄ//4327-2022 գրությամբ դիմելով ՀՀ ֆինանսների նախարարություն, որպես Պայմանագիրը Ընկերությանը ուղարկելու ծանուցում ներկայացրել է eauction.armeps.am էլեկտրոնային համակարգից արտատպում, համաձայն որի՝ Ընկերությանը Պայմանագիր կնքելու առաջարկի վերաբերյալ ծանուցումը ուղարկվել է 04.02.2022թ.-ին: Արդյունքում՝ 01.03.2022թ-ի թիվ 26/26-1/3513-2022 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունը նախաձեռնել է սույն Ընթացակարգը:

Ցանկանում ենք նշել, որ 04.02.2022թ.-ին ուղարկված Պայմանագիր կնքելու առաջարկի վերաբերյալ ծանուցումը Ընկերությունը eauction.armeps.am էլեկտրոնային համակարգից իր էլեկտրոնային փոստին չի ստացել, որպիսի հանգամանքներում Ընկերությունը այդ առաջարկի վերաբերյալ անգամ պատշաճ չի էլ ծանուցվել, որտեղից հետևում է, որ այդ առաջարկի ուժով Ընկերության մոտ չէր կարող առաջանալ պայմանագիրը կնքելու պատավորություն:

2. Դիրքորոշման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

2.1. 23.01.2022թ.-ին eauction.armeps.am էլեկտրոնային համակարգից Պատվիրատուն ծանուցել է Ընկերությանը՝ առաջարկելով կնքել Աճուրդի թիվ ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-ԵԽ-3 ծածկագրով պայմանագիրը, Ընկերությունը Պայմանագիրը չի կնքել, քանի որ եթե կնքեր, ապա Պայմանագրի կատարման փուլում կրելու էր 10 000 000 ՀՀ դրամի վնաս: Պայմանագիրը կնքելու համար «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածով սահմանված 10 աշխատանքային օրը ավարտվել է 07.02.2022թ.-ին:

2.2. 07.02.2022թ.-ին հաջորդող 16-րդ աշխատանքային օրը՝ 01.03.2022թ-ին թիվ 26/26-1/3513-2022 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունը նախաձեռնել է սույն Ընթացակարգը:

2.3. Թաքցնելով պայմանագիրը կնքելու առաջարկը 23.01.2022թ.-ին ուղարկելու հանգամանքը՝ Պատվիրատուն սույն Ընթացակարգը նախաձեռնելու համար ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացրել eauction.armeps.am էլեկտրոնային համակարգից արտատպում, համաձայն որի՝ Ընկերությանը Պայմանագիր կնքելու առաջարկի վերաբերյալ ծանուցումը ուղարկվել է 04.02.2022թ.-ին:

2.4. 04.02.2022թ.-ի պայմանագիր կնքելու առաջարկի վերաբերյալ ծանուցումը Ընկերությունը eauction.armeps.am էլեկտրոնային համակարգից իր էլեկտրոնային փոստին չի ստացել:

3. Հայցադիմումի հիմքերը, փաստարկները.

3.1. ՀՀ Սահմանադրության «Պետական կառավարման համակարգի մարմինները» վերտառությամբ 159-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Պետական կառավարման համակարգի մարմիններն են նախարարությունները, ինչպես նաև (...) նախարարություններին ենթակա այլ մարմիններ, (...) որոնց (...) լիազորությունները սահմանվում են օրենքով:»:

Պետական կառավարման համակարգի մարմինների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 18-րդ կետի համաձայն «2. Նախարարությանը ենթակա մարմիններն են՝ 18) գնումների հետ կապված բողոքներ քննող անձինք:»: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն. «3. Նախարարությանը ենթակա մարմնի ենթակայությունը համապատասխան նախարարությանը սահմանում է Կառավարությունը:»:

ՀՀ Վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի 743-Լ որոշման 34-րդ կետի համաձայն՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը ենթակա մարմիններն են՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձինք:

ՀՀ Կառավարության 2018 թվականի մայիսի 22-ի 580-Ա որոշման 1-ին կետի 12-րդ ենթակետի (ա.) պարբերության համաձայն. «12) Ֆինանսների նախարարությանը ենթակա մարմին է՝ ա. գնումների հետ կապված բողոքներ քննող անձինք:»:

ՀՀ ֆինանսների նախարարի 2018 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 600-Ն հրամանի (այսուհետ՝ Հրաման) 1-ին կետով հաստատված կարգի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերի համաձայն՝

«2. Բողոքը ներկայացվում է Լիազորված մարմին (այսուհետ՝ նաև Նախարարություն) գրավոր՝ Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Մելիք-Ադամյան 1 հասցեով կամ դրա բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը secretariat@minfin.am հասցեով էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով: (...):

3. Ստացված բողոքը նախարարության քարտուղարության (այսուհետ՝ քարտուղարություն) կողմից մուտքագրվում է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ (այսուհետ՝ համակարգ) և նույն օրը

համակարգի միջոցով տրամադրվում է Անձին՝ (գնումների հետ կապված բողոքներ քննող անձ) (...):

4. Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ընթացակարգը նախաձեռնում է նախարարությունը՝ Գնումների քաղաքականության վարչության միջոցով, համապատասխան փաստաթղթերը գնումների հետ կապված բողոքներ քննող անձանց գրավոր տրամադրելու եղանակով: Ընդ որում, (...) ընթացակարգը համարվում է սկսված փաստաթղթերն Անձին տրամադրվելու օրվանից:»

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Վերոգրյալի համաձայն, ՀՀ Ֆինանսների նախարարությունը և Գնումների հետ կապված բողոքներ քննող անձինք՝ լինելով ՀՀ ֆինանսների նախարարությանը ենթակա մարմին, հանդիսանում են պետական կառավարման համակարգի մարմիններ: Այդ իսկ պատճառով ՀՀ Ֆինանսների նախարարության և գնումների հետ կապված բողոքներ քննող անձանց լիազորությունները սահմանվում են օրենքով, հետևաբար վերջիններս իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են օրենքով, մասնավորապես՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով և դրա իրականացումն ապահովելու նպատակով ընդունված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով:

Հրամանի 1-ին կետով հաստատված կարգի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերի և Կարգի 45-րդ կետի համաձայն՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) Պատվիրատուի ուղարկած հիմքերով նախաձեռնում է մասնակցին Ցուցակում ներառելու ընթացակարգ: Նախարարությունը իրավասու է ընթացակարգը նախաձեռնել, երբ ի հայտ են եկել «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերը և այդ հիմքերը Պատվիրատուն ուղարկել է Նախարարություն դրանք ի հայտ գալու օրվան հաջորդող

5 աշխատանքային օրվա ընթացքում, ընդ որում վերջինս մասնակցին Ցուցակում ներառելու վերաբերյալ ընթացակարգը պետք է նախաձեռնի հիմքերը սատանալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Այլ խոսքով՝ Նախարարությունը իրավասու է մասնակցին Ցուցակում ներառելու վերաբերյալ ընթացակարգը նախաձեռնել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերը ի հայտ գալու օրվան հաջորդող առավելագույնը 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Ինչպես երևում է սույն գործի փաստական հանգամանքներից, Ընթացակարգը նախաձեռնվել է 01.03.2022թ-ին՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատուի դիմումի հիման վրա, քանի որ Ընկերությունը Պայմանագիրը չի կնքել: Ընդ որում Պայմանագիրը կնքելու համար «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածով սահմանված 10 աշխատանքային օրը ավարտվել է 07.02.2022թ.-ին, քանի որ ինչպես նշված է սույն գործի փաստական հանգամանքներում Պայմանագիր կնքելու առաջարկի վերաբերյալ ծանուցումն Ընկերությանը ուղարկվել է 23.01.2022թ.-ին : Այսինքն՝ սույն գործի փաստական հանգամանքներից հետևում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերը ի հայտ են եկել 07.02.2022թ.-ին իսկ Ընթացակարգը նախաձեռնվել է այդ հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող 16-րդ աշխատանքային օրը՝ 01.03.2022թ-ին, որպիսի հանգամանքներում կարող ենք արձանագրել, որ այս Ընթացակարգը նախաձեռնվել է օրենքի խախտմամբ:

3.2. Այսպես՝ Համադրելով սույն գործում առկա փաստական հանգամանքները և սույն դիրքորոշման 3.1 կետը կարող ենք փաստել, որ այս Ընթացակարգը նախաձեռնվել է Հրամանի և Կարգի վերոգրյալ նորմերի խախտումներով, հետևաբար այն անհրաժեշտ է դադարեցնել, քանի որ ՀՀ ֆինանսների նախարարությունը և գնումների հետ կապված բողոքներ քննող անձը հանդիսանալով պետական կառավարման համակարգի մարմիններ իրավասու են միայն անել այն ինչի համար ուղղակիորեն լիազորված են օրենքով: Տվյալ դեպքում ՀՀ ֆինանսների նախարարի 600-ն հրամանի և ՀՀ կառավարության 526-Ն որոշման համաձայն՝ սույն ընթացակարգը հնարավոր էր նախաձեռնել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերը ի հայտ գալու օրվան՝ 07.02.2022թ-ին հաջորդող առավելագույնը 10 աշխատանքային օրվա ընթացքում, մինչդեռ այս ընթացակարգը նախաձեռնվել է նշյալ հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող 16-րդ աշխատանքային

օրը: Նշյալից կարող ենք փաստել, որ այս ընթացակարգը նախաձեռնվել է օրենքի խախտամբ, ուստի այն անհրաժեշտ է դադարեցնել:

3.3. Ինչ վերաբերվում է 04.02.2022թ.-ին ուղարկված Պայմանագիր կնքելու առաջարկի վերաբերյալ ծանուցմանը, ապա ինչպես պարզեցինք վերոգրյալով դա ուղարկվել է Պայմանագիր կնքելու վերաբերյալ ծանուցման իրական օրը՝ 23.01.2022թ. թաքցնելու համար, քանի որ եթե Գրավոր հիմքերում (22.02.2022թ.-ի գրությամբ) նշվեր, որ Պայմանագիր կնքելու վերաբերյալ ծանուցումը ուղարկվել է 23.01.2022թ.-ին, ապա սույն Ընթացակարգը Բողոքներ քննող անձի կողմից մերժվելու էր Կարգի 45-րդ կետը խախտելու հիմքով: Ավելին՝ 04.02.2022թ.-ին ուղարկված Պայմանագիր կնքելու առաջարկի վերաբերյալ ծանուցումը Ընկերությունը իր էլեկտրոնային փոստին՝ elin-dian@mail.ru չի ստացել, որպիսի հանգամանքներում կարող ենք փաստել, որ Ընկերությունը այդ առաջարկի վերաբերյալ պաշաճ չի ծանուցվել, որտեղից հետևում է, որ այդ առաջարկի ուժով Ընկերության մոտ Պայմանագիրը կնքելու պարտավորություն չէր կարող առաջանալ:

Պահանջը.

Ելնելով վերոգրյալից խնդրում ենք՝

Դադարեցնել կամ մերժել ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից «ՀԱԴՐՈՒԹ-1» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված՝ թիվ ՍՑ-ՆԳ-2022/85 ծածկագրով ընթացակարգը:

Միջնորդություն

Հաշվի առնելով վերոգրյալը խնդրում ենք՝ eauction.armeps.am էլեկտրոնային գնումների համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող անձից պարզել.

արդյո՞ք 04/02/2022թ.-ին պայմանագիր կնքելու առաջարկի վերաբերյալ ծանուցումը eauction.armeps.am էլեկտրոնային համակարգից ուղարկվել է Ընկերության elin-dian@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին: Եթե ուղարկվել է, ապա խնդրում ենք պահանջել ուղարկելու հանգամանքը ապացուցող փաստերը»:

«Հադրութ-1» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/85 ընթացակարգի շրջանակներում 07.03.2022թ. ժամը 09:30-ին և 24.03.2022թ. ժամը 09:35-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, 24.03.2022թ. ժամը 09:35-ին հրավիրված նիստին ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է վերը նշված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպությունների (ք. Երևան և Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնք) 2022 թվականի սննդամթերքի կարիքների բավարարման նպատակով հայտարարված «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-ԵԽ-3» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվել «ՀԱԴՐՈՒԹ 1» ՍՊԸ (այսուհետ՝ կազմակերպություն): Վերոնշյալ գնման ընթացակարգի տվյալ չափաբաժինների մասով անգործության ժամկետը լրացել է սույն թվականի հունվարի 23-ին: Կազմակերպությանը բանավոր տեղեկացվել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն ստորագրված (հաստատված) պայմանագիրը անհրաժեշտ է ներկայացնել 10 աշխատանքային օրվա ընթացքում, սակայն վերջինիս կողմից սահմանված ժամկետում պայմանագիրը չի կցվել էլեկտրոնային աճուրդ համակարգում:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի պահանջները, «ՀԱԴՐՈՒԹ 1» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Ձեզ եմ ներկայացնում գնման ընթացակարգի արձանագրությունը»:

Ի պատասխան Ձեր 2022 թվականի փետրվարի 21-ի թիվ 03/26-1/2995-2022 գրության, ներկայացնում եմ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպությունների (ք. Երևան և Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնք) 2022 թվականի սննդամթերքի կարիքների բավարարման նպատակով հայտարարված «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-ԵԽ-3» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչված «ՀԱԴՐՈՒԹ 1» ՍՊԸ-ի կողմից /այսուհետ՝ մասնակից/ կցված հայտի փաթեթը, վերոնշյալ գնման

ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արձանագրությունները, ինչպես նաև eauction.armeps.am համակարգի միջոցով մասնակցին ուղարկված ծանուցումը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/85 ընթացակարգի շրջանակներում 07.03.2022թ. ժամը 09:30-ին և 24.03.2022թ. ժամը 09:35-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/85 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/85 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից հայտարարվել է «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-ԵԽ-3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Հադրութ-1» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.01.2022թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով «Հադրութ-1» ՍՊԸ-ին հաղթող մասնակից ճանաչելու վերաբերյալ:

3. Գործում առկա նյութերի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից Ընկերությանը պայմանագիր կնքելու առաջարկը eauction.armeps.am համակարգի միջոցով ուղարկվել է 23.01.2022թ. և 31.01.2022թ.:

4. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի դրույթով, Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ներկայացրել է 22.02.2022թ.՝ թիվ ՍՄ//4327-2022 գրությամբ:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 01.03.2022թ. թիվ 26/26-1/3513-2022 գրությունը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը 22.02.2022թ. թիվ ՍՄ//4327-2022 գրությունը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 45-րդ կետով սահմանվում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր

ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Այսպես, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից հայտարարվել է «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-ԵԽ-3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Հադրութ-1» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.01.2022թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով «Հադրութ-1» ՍՊԸ-ին հաղթող մասնակից ճանաչելու վերաբերյալ:

Ընկերությունը ՍՑ-ՆԳ-2022/99 ընթացակարգի շրջանակներում ներկայացված միջնորդությամբ խնդրել է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին eauction.armeps.am էլեկտրոնային գնումների համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող անձից պարզել հետևյալը. «արդյո՞ք 04/02/2022թ.-ին պայմանագիր կնքելու առաջարկի վերաբերյալ ծանուցումը eauction.armeps.am էլեկտրոնային համակարգից ուղարկվել է Ընկերության elin-dian@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին: Եթե ուղարկվել է, ապա խնդրում ենք պահանջել ուղարկելու հանգամանքը ապացուցող փաստերը»:

Վերոգրյալով պայմանավորված՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 24.03.2022թ. թիվ /ԲՔԱ-ԳՆ/1/ 5018-2022 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի վարույթում քննվող «ՀԱԴՐՈՒԹ-1» ՍՊԸ-ին (պատվիրատու՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ծածկագիր՝ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-ԵԽ-3») գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ՆԳ-2022/85 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում առաջացել է eauction.armeps.am համակարգում (հետայսու՝ Համակարգ) առկա տեղեկատվությանը տիրապետելու անհրաժեշտություն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Համակարգին հասանելիություն ունի ՀՀ ֆինանսների նախարարությունը, խնդրում եմ տրամադրել «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-

22/3-ԵԽ-3» էլեկտրոնային աճուրդի վերաբերյալ Համակարգում առկա հետևյալ տեղեկատվությունը.

Պատվիրատուի կողմից գնման ընթացակարգի շրջանակներում «ՀԱԴՐՈՒԹ-1» ՍՊԸ-ին ուղարկված բոլոր ծանուցումները, ինչպես նաև տրամադրել ծանուցումների արտատպումները»:

Ի պատասխան վերը նշված գրության՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը 28.03.2022թ. թիվ Ն/26-1/6069-2022 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան վերոհիշյալ գրության, կից տրամադրում ենք ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-ԵԽ-3 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Հադրութ-1» ՍՊԸ-ին հասցեագրված համակարգում առկա ծանուցումները»:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից վերը նշված գրությամբ տրամադրված «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-ԵԽ-3» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Հադրութ-1» ՍՊԸ-ին հասցեագրված համակարգում առկա ծանուցումների համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից Ընկերությանը պայմանագիր կնքելու առաջարկը eauction.armeps.am համակարգի միջոցով ուղարկվել է 23.01.2022թ. և 31.01.2022թ.:

Միևնույն ժամանակ արձանագրում եմ, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի դրույթով, Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ներկայացրել է 22.02.2022թ.՝ թիվ ՍՄ//4327-2022 գրությամբ:

Վերը շարադրված փաստերով պայմանավորված և հիմք ընդունելով այն փաստը, որ Ընկերությանը պայմանագիր կնքելու առաջարկը eauction.armeps.am համակարգի միջոցով ուղարկվել է 23.01.2022թ., արձանագրում եմ, որ «Հադրութ-1» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել ***<u>08.02.2022թ.,</u>*** սակայն, Պատվիրատուն Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկել է լիազորված մարմին ***<u>22.02.2022թ.,</u>*** որպիսի պայմաններում Պատվիրատուի կողմից խախտվել է «Հադրութ-1» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը (այդ թվում՝ մասնակցի

տվյալները) լիազորված մարմին ներկայացնելու՝ Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետը:

Այս տեսանկյունից հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումը որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է: Միաժամանակ գնումների գործընթացի կազմակերպման կարգը սահմանող ՀՀ կառավարության 05.04.2017թ. N 526-Ն որոշումը հստակ կարգավորում է գնման գործընթացի իրականացման կարգը՝ փուլ առ փուլ և ժամկետները:

Ընդ որում՝ համապատասխան ժամկետային սահմանափակումներ նախատեսելն ինքնանպատակ չէ և ուղղված է կամայականություններից խուսափելուն և գործողությունների ժամանակին իրականացնելուն, քանի որ յուրաքանչյուր դեպքում ուղղված է իրավունքների և պարտականությունների իրագործմանը:

Այսպիսով՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում՝ Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն

ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը:

Այսպիսով՝ ժամկետային սահմանափակումները հետապնդում են իրավական որոշակիություն ապահովելու նպատակ, որպես պետությունում իրավական որոշակիության և կայունության երաշխավորման միջոց:

Միաժամանակ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

ՀՀ սահմանադրական դատարանը 02.04.2014թ. կայացրած թիվ ՍԴՈ-1142 որոշմամբ իրավական որոշակիության սկզբունքի վերաբերյալ հայտնել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը: Սահմանադրական դատարանը 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման մեջ, մասնավորապես, արձանագրել է, որ «... օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը»: Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ»:

Վերը հիշատակված իրավական նորմերի նման մեկնաբանությունը բխում է նաև իրավական ակտերի որոշակիության սկզբունքից, որն իրավական պետությունում գործող կարևորագույն սկզբունքներից մեկն է, իսկ Հայաստանի Հանրապետությունը, ինչպես հռչակված է ՀՀ Սահմանադրության թե՛ մինչև 25.12.2015թ. գործող

խմբագրությամբ, թե՛ ներկայումս գործող խմբագրությամբ 1-ին հոդվածով, իրավական պետություն է:

Վերոգրյալ իրավական նորմերի մեկնաբանության և սույն գործի փաստական հանգամանքների համադրման արդյունքում արձանագրում եմ, որ տվյալ դեպքում Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետով սահմանված իմպերատիվ դրույթը՝ այն է հինգ աշխատանքային օր ժամկետը: Ընդ որում՝ օրենսդրությունը չի նախատեսում նշված ժամկետը վերականգնելու ինստիտուտ, հետևաբար, տվյալ դեպքում հինգ աշխատանքային օր ժամկետի խախտման հանգամանքները չեն դիտարկվում:

Նման պայմաններում գտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել «Հադրութ-1» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 01.03.2022թ. թիվ 26/26-1/3513-2022 գրությամբ «Հադրութ-1» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**